թյունն էլ ավելի բարձրացնելու գործում, այն է՝ ժամանակին և բարձրորակ կատարել տրակտորների աշնան-ձմեռային նորոգումը

Սակայն, դրա հետ միասին, կան նաև այնպիսի ձեռնարկություններ, որոնց ղեկավարները լուրջ չեն վերաբերվում այդ կարևո-

տալ երկրին և դրանով իսկ կարագացնել գերմանա-ֆաշիստական ավազակային բանակների վերջնական ջախջախումը։

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

ՄՈՍԿՎԱ, (ՏԱՍՍ).— Բացառիկ նշանակություն ունեցող իրադարձություն է հանդիսանում Երևանում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա ստեղծելը։ Այդ փաստը վկայում է, որ Հայաստանի գիտնականները Հայրենական պատերազմի տարիներին իսկական աշխատանքային հերոսություն են հանդես բերել, աշխատելով ժողովրդատնտեսական այն պրոբլեմների լուծման վրա, որոնք պատերազմի տարիներին հատկապես կարևոր են մեր երկրի համար։

Մոսկվայում վերջերս տեղի ունեցած Գիտությունների Ակադեմիայի Փիլիալների ու բազաների Խորհրդի սեսիան նշեց, որ Փիլիալը գլխավոր արդյունքների է հասել տեղական հումքային ռեսուրսների ուսումնասիրության, դեֆիցիտային արդյունաբերական նյութերի փոխարինիչների որոնման, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում։

Ակադեմիայի կազմակերպվելը մի նոր հուժկու խթան է հանդիսանում Հայկական ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի հետագա զարգացման համար, ազգային գիտական կադրերի աճման համար։

Այդ կապակցությամբ կարևորագույն նշանակություն է ներկայացնում Հայաստանում Փիլիալի սիստեմում և ռեսպուբլիկայի գիտական այլ հիմնարկներում աշխատող ականավոր հայ գիտնականների թվից նոր Ակադեմիայի իսկական անդամների ու թղթակիցների ընտրությունը։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի կազմակերպման հարցերը վերջերս տեղի ունեցած ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության նիստում բազմակողմանի քննության առարկա դարձան։ Նորաստեղծ Ակադեմիային Մոսկվայի գիտական գործիչների կողմից ցույց կտրվի ամենաջերմ օժանդակությունը։ Նրա կազմակերպմանը անմիջական մասնակցություն կունենան սովետական այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպես ակադեմիկոսներ Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը և Բ. Գրեկովը։